ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

ԷՋՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԵՏ ԱՂԵՐՍՎՈՂ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԸ

*Նաև երախտագիտության խոսք՝ նվիրված Մատենադարանի տնօրեն արժանահիշատակ Լևոն Խաչիկյանին**

Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրաբերած իմ լուման եղավ մի «Ծաղկաքաղ Ավետարանի» ստեղծումը, որի հիշատակարանն ավարտվել է հետևյալ տողերով. «Աստված ողորմի Մատենադարանի արժանահիշատակ տնօրեններին ու վաստակաշատ գիտնականներին, որոնք եղան իմ ուսուցիչները»:

Այսօր, երբ Մատենադարանի կոլեկտիվը նշում է Լևոն Խաչիկյանի 80-ամյակը, ես իմ երախտագիտական խոսքն եմ ուզում ասել, թե ինձ համար ո՞վ է եղել նա որպես մարդ, որպես գիտնական և որպես բաբունապետ:

1945 թվականին աշխատանքի ընդունվեցի Մատենադարանում, որի տնօրենն էր Գևորգ Աբովը: Աշխատում էի տպագիր գրականության բաժնում: Իր սովորության համաձայն, Գևորգ Աբովը ամեն օր, առավոտյան, շրջում էր բաժինները: Գրադարան մտնելիս մոտենում էր նաև ինձ և ժպտադեմ հարցնում, թե ինչպես են ընթանում տպագիր գրքերի մայր մատյանի գրանցումները:

Գևորգ Աբովին այնուհետև երկու տարով հաջորդեց Վաչե Նալբանդյանը: Այդ տարիներին աշխատում էի ձեռագրատանը՝ գրանցում էի ձեռագրերի մայր մատյանները: 1954 թվականին Նալբանդյանին փոխարինեց Մատենադարանի գիտական աշխատող, ձեռագրագետ Լևոն Խաչիկյանը: Այս ժամանակ արդեն աշխատում էի ձեռագրերի սպասարկման բաժնում: Որպես լրացուցիչ աշխատանք, ինձ հանձնարարվեց նախախորհրդային շրջանի մամուլի քարտագրումը: Ընթերցողների գնալուց հետո, երբեմն, շարունակում էի աշխատել: Եթե Խաչիկյանը այդ ժամերին լինում էր Մատենադարանում, բարձրանում էր ընթերցասրահ, ծանոթանում աշխատանքներիս և որոշ ցուցումներ տալիս:

Այդ տարիներին Մատենադարան էր այցելում Լ. Ա. Դուրնովոն՝ իր ղեկավարած նկարիչների խմբով: Հրատարակության էր պատրաստում «Հայկական մանրանկարչություն» ալբոմը: Ընդօրինակում էին ձեռագրերից նմուշներ: Փորձեցի սովորել այդ արվեստը: Առաջին ընդօրինակությունը եղավ Ծերուն ծաղկողի դիմապատկեր պատառիկը: Սամսոն Լալաֆարյանը աշխատանքս ներկայացրեց Լ. Խաչիկյանին: Հաջորդ օրը Խաչիկյանը ինձ կանչեց իր մոտ և ասաց. - Սրանից հետո քեզ թույլ եմ տալիս, քո հիմնական աշխատանքիդ զուգընթաց, օրական երկու ժամ զբաղվես մանրանկարչությամբ: Իմ ոգևորությանը սահման չկար:

Չէ՞ որ աշխատանքս տեսել ու գնահատել էր Մատենադարանի տնօրենը և լավագույն ձեռագրագետը, ով հրաշալի գիտակ էր նաև մանրանկարչական արվեստի ու միջնադարյան նշանավոր նկարիչների գործերի:

Ես պետք է ինձ արդարացնեի բաբունապետի առջև: Ուստի չբավարարվեցի պատահական ընդօրինակություններով:

---

* Այս աշխատանքը որպես զեկուցում կարդացվել է Մատենադարանի 1998 թ. տարեկան գիտական նստաշրջանում, որը նվիրված էր Լևոն Խաչիկյանի ծննդյան 80-ամյակին:

Մատենադարան այցելող գիտնականներից շատերը երբեմն միմյանց հարցնում էին, թե արդյոք ձեռագրերում նրանց հանդիպե՞լ է, ասենք՝ երաժշտական գործիք կամ որևէ զենքի տեսակ, կամ՝ գյուղատնտեսական առարկաներ: Այդ ամենը լսելով ես մտածեցի. արդյոք մեր գիտնականներին օգնած չե՞մ լինի, եթե կարողանամ ձեռագրերից հավաքել և ընդօրինակել նման պատկերներ:

Շուտով ձեռնարկեցի «Արհեստներն ու կենցաղը» թեմայի շուրջ նյութերի հավաքման ու ընդօրինակման աշխատանքին: Երբ արդեն աշխատանքս մոտենում էր ավարտին, համարձակություն ունեցա ցույց տալ տնօրեն Լևոն Խաչիկյանին: Դա նրա համար անակնկալ եղավ: Հաջորդ օրն ինձ կանչեց իր մոտ և գզրոցից հանելով մի թղթապանակ՝ մեկնեց ինձ ու ասաց.- Վերցրու այս նկարները, քեզ պետք կգան:

Դրանք ձեռագրերից ընդօրինակված արհեստներին վերաբերող գծապատկերներ էին, որոնց մասին նա ժամանակին զեկուցում էր կարդացել գիտական նստաշրջանում:

Լևոն Խաչիկյանի միջնորդությամբ Մոսկվայում հրատարակվեց «Արհեստներն ու կենցաղը» ալբոմը, որի առաջաբանում գրվեց. «Վերջում հարկ ենք համարում նշել, որ պրոֆ. Լևոն Խաչիկյանը տարիներ առաջ այս հարցի շուրջ հանդես է եկել հատուկ զեկուցումով և իր օգտակար խորհուրդներով նպաստել մեր աշխատանքին»:

Ինձ շնորհվեց կրտսեր գիտաշխատողի աստիճան և իմ խնդրանքով հանձնարարվեց աշխատել «Հայ մանրանկարիչների մատենագիտություն» թեմայի վրա: Այդ ընթացքում ձեռնարկեցի «Դիմանկար» ալբոմի պատրաստումը: Այստեղ նույնպես մեծ ներդրում ունեցավ Լևոն Խաչիկյանը: Ալբոմի համար նախընտրածս դիմանկարների թիվը անցնում էր 200-ից: Իսկ դրանց մի փոքր մասը՝ արվեստի տեսակետից ոչ լիարժեք գործեր էին: Ուստի ընտրությունը կատարվեց Լևոն Խաչիկյանի օգնությամբ, և տպագրության համար առանձնացրեցինք ընդամենը 130 դիմանկար, որոնք հավանություն գտան հրատարակչության կողմից:

Լևոն Խաչիկյանի պայծառ հիշատակին նվիրված այս գիտաժողովում կուզենայինք մի փոքրիկ հաղորդում տալ վերջերս մեզ հանդիպած 10-րդ դարի մի արժեքավոր նորահայտ մագաղաթյա պահպանակի մասին:

***

Մատենադարանում ունենք ձեռագիր պատառիկների հավաքածու, որի մեջ մտնող միավորների թիվը հասնում է 2000-ի: Դրանցից յուրաքանչյուրը կորստյան մատնված մի ձեռագրի մասունք է: Այս պատառիկները 1950-ական թվականներին գիտական մշակման է ենթարկել Մատենադարանի գիտաշխատող Սուրեն Քոլանջյանը:

Ունենք նաև հնագույն ձեռագրերից պատրաստված մասունքներ, որոնք օգտագործվել են հետագա ձեռագրերի համար որպես պահպանակներ: Դրանցից շատերը մագաղաթյա ձեռագրերի բեկորներ են, որոնք անգնահատելի արժեք են ներկայացնում:

Ուշագրավ է նաև այն փաստը, երբ միևնույն ձեռագրերից մնացած բեկորներ երբեմն հայտնվում են թե՛ պատառիկների և թե՛ պահպանակների շարքում, որոնց հայտնաբերումն ու համադրումը դարձյալ արժեքավոր է:

Հիշված բնագավառներում կատարված գիտական ուսումնասիրությունների հեղինակները մեծ մասամբ Մատենադարանի գիտնականներ են, որոնք տարիներ շարունակ իրենց գիտահետազոտական աշխատանքների շնորհիվ հայտնաբերել են հայագիտության համար մեծ արժեք ներկայացնող բեկորներ: Այս ուղղությամբ անելիքներ դեռ շատ կան, և դեռ շատ անակնկալներ են սպասվում:

Այդ մասունքներում հանդիպում են նաև վաղ միջնադարյան հայ մանրանկարչությանը վերաբերող արժեքներ՝ տերունական նկարներ, խորաններ, ավետարանիչների պատկերներ, լուսանցազարդեր, որոնք օգնում են որոշ հարցերի լուսաբանմանը:

Մատենադարանում ունենք շուրջ երկու տասնյակից ավելի նկարազարդ պահպանակներ, բոլորն էլ 10-11-րդ դարերի ձեռագրերի բեկորներ, որոնք տեղադրված են 13-17-րդ դարերի ձեռագրերում:

Նման մասունքների շնորհիվ մեզ հայտնի դարձավ Թորոս Ռոսլինի 1252-1254 թթ. ընդօրինակած Ավետարանը, որը Կոստանդին Կաթողիկոսը պատվիրել էր իր սան թագաժառանգ Լևոն Գ-ի համար[1]: Իսկ 14-րդ դարի Մաշտոցներից մեկում տեղադրված 11-րդ դարի մագաղաթյա երեք պահպանակներն, իրենց տերունական նկարներով ու ավետարանիչների պատկերներով, սերտորեն առնչվում էին Մատենադարանի 1038 թ. Ավետարանի / Ձեռ. 6201 / նկարների հետ[2]:

Վերջերս մեր ուշադրությունը գրավեց Վասպուրականի 16-րդ դարի Ավետարաններից մեկի մագաղաթյա խորանազարդ պահպանակը[3] / Ձեռ. 5027 (տե՛ս. նկ. 1)/: Առաջին հայացքից կարելի էր նկատել, որ այս պահպանակի Ա և Բ էջերի խորանները թե՛ իրենց զարդամոտիվներով ու գունային համադրմամբ և թե՛ ճարտարապետական երկկամար կոթողային ոճավորմամբ մեծ աղերս ունեն 10-րդ դարի հանրահռչակ «Էջմիածնի Ավետարանի» խորանների հետ[4]: Սակայն, քանի որ «Էջմիածնի Ավետարանի» խորանները լրիվ են և ընդգրկում են համաբարբառի Ա-ժ կանոններն ամբողջությամբ, մնում էր ենթադրել , որ 16-րդ դարի ձեռագրի պահպանակ խորանները պետք է պատկանեին մեկ այլ Ավետարանի, որը հավանաբար դարձյալ 10-րդ դարի ընդօրինակություն էր և պատկանել է միևնույն գրչատանը: «Էջմիածնի Ավետարանի» գրիչ Հովհան-նեսը հիշատակարանում գրում է. «...զի յստոյգ ի հին յաւրինակաց գրեցաւ[5]»: Ձեռագրագետ Արտաշես Մաքսոյանի հավաստմամբ, այս պահպանակ խորաններում տեղադրված համաբարբառի կանոնների թե՛ գրությունը և թե՛ օգտագործած թանաքի գույնը համապատասխանում են գրիչ Հովհաննեսի գրչարվեստին: Այդ նշանակում է, որ «Էջմիածնի Ավետարանը» Բղենո Նորավանքի գրիչ Հովհաննեսի միակ օրինակը չի եղել: Այստեղ կարելի է վկայակոչել մեկ այլ փաստ: Մատենադարանի 10-րդ դարի ձեռագրերից մեկն էլ ընդամենը երկու թերթից բաղկա-

---

1 Գևորգյան Ա., Լևոն երրորդ թագավորի Ավետարանը, Բանբեր Մատենադարանի, 8, Երևան, 1967, էջ 43:

2 Измайлова Т. А., Геворкян А. Б., фрагменты миниатюр на защитных листах рукописи Матенадаран 8287, Բանբեր Մատենադարանի, 11, Երևան, 1974, էջ 256:

3 Խորանի շարունակությունը կազմի Բ պահպանակն է:

4 ՄՄ. Ձեռ. 2374:

5 Գարեգին Ա Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Սեբիլիաս, 1951:



Նկ. 1 Ձ. 5027. XVI դ., պահպանակ. X դ., խորան 1ա

Նկ. 2 Ձ. 9430, X դ., Ավետարան, խորան, թ. 2ա



Նկ. 3 Ձ. 2374, Էջմիածնի Ավետարան, 989 թ. խորան, 5ա

ցած, անհայտ ձեռագրերի մագաղաթյա պատառիկներ են /Ձեռ. 9430 (տե՛ս. նկ. 2)/, որոնք ժամանակին հայտնաբերվել ու որպես առանձին միավոր տեղադրվել են ձեռագրերի շարքում: Դրանք դարձյալ Ավետարանի նկարազարդ խորաններ են՝ համաբարբառի Գ-Դ և Ժ կանոններով: Այս խորանների համեմատությունը պահպանակների հետ դարձյալ համոզում են, որ դրանք նույնպես միևնույն գրչատանն ընդօրինակված և «Էջմիածնի Ավետարանի» կրկնօրինակ ձեռագրի պատառիկներ են (տե՛ս նկ. 3): Սակայն պահպանակ խորանները և պատառիկ խորանները տարբեր ձեռագրերի մասունքներ են, քանի որ դրանց համաբարբառների կանոնները կրկնվում են: Այստեղ, միևնույն գրչատանը վերագրելու համար, կա մեկ այլ վկայություն: «Էջմիածնի Ավետարանի» և 9430 ձեռագիր պատառիկների խորանների բացահայտ նմանությունից բացի, պատառիկի Ժ կանոնը պարունակող խորանի հաջորդ էջում պատկերված է տաճարիկ /tempetto/, որն իր շքեղ սյունազարդերով ու

Նկ. 4 Ձ. 2374, Էջմիածնի Ավետարան, 989 թ., տաճարիկ, թ. 5բ

Նկ. 5 Ձ. 9430, Ավետարան, X դ., տաճարիկ (Temnetto), թ. 1ա

սքանչելի բուսական և թռչնային զարդաձևերով միանգամայն համապասխանում է «Էջմիածնի Ավետարանի» Ժ կանոնի վերջում պատկերված տաճարիկին, մի բան, որ ուշ շրջանի ձեռագրերում չի հանդիպում (տե՛ս. նկ. 4): Լ. Ա. Դուրնովոն ձեռ. 9430-ի այդ պատկերը համարում է «Էջմիածնի Ավետարանի» կրկնությունը (տե՛ս. նկ. 5)[6]: Դա պաշտամունքային մի շինություն է և, ինչպես նշում է Դուրնովոն, խորհրդանշում է Քրիստոսի գերեզմանի ծածկը:

Վաղ շրջանի հայկական ձեռագրերում բավականին տարածում է ունեցել տաճարիկի մոտիվը: Նման տաճարիկներ կան նաև 9-11-րդ դարերի հայկական այլ Ավետարաններում: Սակայն Սիրարփի Տեր-Ներսեսյանին հայտնի էին նաև բյուզանդական և հայկական Ավետարաններ / Երուս. ձ. 2555 և Վիեննա, ձ. 697/ որոնց տաճարիկներում նա որևէ կապ չէր տեսնում «Էջմիածնի Ավետարանի» պատկերի հետ[7]: Մինչդեռ, ինչպես ասվեց, 9430 ձեռագրի տաճարիկը «Էջմիածնի Ավետարանի» տաճարիկի կրկնությունն է: Տաճարիկի վերաբերյալ կան պարզաբանելի այլ հարցեր՝ կապված նրա ճարտարապետական կառույց լինելու հետ, որը մեր նպատակից դուրս է: Ճարտարապետ Ստ. Մնացականյանի կարծիքով, դրանք լայն տարածում են ունեցել հատկապես Սյունյաց աշխարհում[8]: Կարծում ենք, բացառված չէ, որ Բղենո Նորավանքի համալիրում լիներ նաև հիշված տաղավարիկ-դամբարանը: Այդ համոզմանն են մղում Բղենո Նորավանքի պեղումների գիտական ուսումնասիրությունները, որոնք հնարավորություն են տվել վանքի պատկերաքանդակների ու զարդաքանդակների ուղղակի անալոգները տեսնել 5-7-րդ դարերի հայկական ճարտարապետական զարդամոտիվներում ու հերոլդատիպ կենդանական

---

6 Դուրնովո Լ. Ա., Հայկական մանրանկարչություն-ալբոմ, Երևան, 1967, էջ 202:

7 Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 42:

8 Մնացականյան Ստ., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 202:

խորհրդանշաններում, որոնց հետագա աղերսները կարելի է տեսնել 9-11-րդ դարերի հայ մանրանկարչության մեջ[9]: Դրա ցայտուն օրինակներն են Ալքե թագուհու /9-րդ դար/, Էջմիածնի /10-րդ դար/, Մուղնու /11-րդ դար/ Ավետարանների խորանների զարդամոտիվները: Մեզ են հասել հատկապես Սյունիքի Որոտանի շրջանի /Ծղուկ Գավառի/ այլ գրչատներում՝ Տաթևում, Աղուերծում ընդօրինակված 14-15-րդ դարերի ձեռագրեր, որոնք ունեն 10-11-րդ դարերի խորանազարդ պահպանակներ:

«Էջմիածնի Ավետարանը» իր վրա է հրավիրել թե՛ հայ և թե՛ օտար գիտնականների ուշադրությունը: Նրանք հանգամանորեն անդրադարձել են ձեռագրի պատմական և գեղագիտական արժեքներին ու արձանագրել, որ Սյունյաց Բղենո Նորավանքը հիրավի եղել է գրչության խոշոր կենտրոններից մեկը՝ իր հարուստ մատենադարանով[10]: Այդ դպրոցի շարունակողները դարձան Սյունիքի մյուս գրչատները: Նշանակում է՝ «Էջմիածնի Ավետարանը» ոչ միայն կարող էր ընդօրինակվել ավելի վաղ օրինակից, այլ կարող էր նաև գաղափար օրինակ դառնալ: Ուստի շատ հավանական է, որ գրչատանը ընդօրինակված լինեն Մատենադարանի ձեռ. 9430 պատառիկների և 5027 ձեռագրի պահպանակների երկու անհայտ Ավետարանները: Ավելին՝ թե՛ Ս. Տեր-Ներսեսյանն ու Լ. Ա. Դուրնովոն և թե՛ ճարտարապետ Ստ. Մնացականյանը, անդրադառնալով «Էջմիածնի Ավետարանի» մանրանկարների ուսումնասիրությանը և ժխտելով Ստրիժիգովսկու հայտնի տեսակետը, նշում են, որ «Էջմիածնի Ավետարանի» զարդամոտիվներն իրենց բազմաթիվ փաստարկումներով կապվում են 5-7-րդ դարերի հայկական եկեղեցական որմնանկարների հետ /Լմբատավանք, Արուճ/: Ուստի կարծում ենք, չի բացառվում, որ «Էջմիածնի Ավետարանի» 7-րդ դարի կազմը և չորս տերունական նկարները թերևս պատկանել են 7-րդ դարի այն ձեռագրին, որն ընդօրինակվել է Սյունիքում:

---

9 Բարխուդարյան Ս., «Էջմիածնի Ավետարանի» գրչության վայրը, Բանբեր Մատենադարանի, 4 Երևան, 1958, էջ 48: Մաթևոսյան Ռ., Հայկական գինանշաններ, Երևան, 1994:

10 Մաթևոսյան Ա., Էջմիածնի Ավետարան, 1000 տարի, «Էջմիածին», 1990, թ. Ա- Գ: